Վարկային տոկոսադրույքների և ծախսերի փոխհատուցման առաջարկվող տարբերակները

1) սուբսիդավորել ոռոգման արդիական համակարգերի ներդրմանն (*սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ*) ուղղված վարկերի տոկոսադրույքներն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն 2 %, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող գյուղատնտեսական գործունեություն ծավալող կոոպերատիվներին՝ 0 % տոկոսադրույքով, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից,

2) սուբսիդավորել ոռոգման արդիական համակարգերի ներդրման համար կատարված կապիտալ ծախսերի (*մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց*) համար տրամադրված վարկերի տոկոսադրույքներն այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը տրամադրվեն 2 %, իսկ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ 0 % տոկոսադրույքով, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են առանց մասնագիտացված կազմակերպության,

3) փոխհատուցել ոռոգման արդիական համակարգեր ներդնող տնտեսա-վարողների կողմից կատարված ծախսերի (սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ) 16 %-ը, իսկ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ 18 %-ը, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված կազմակերպության կողմից,

4) փոխհատուցել ոռոգման արդիական համակարգեր ներդնող տնտեսա-վարողների կողմից կատարված կապիտալ ծախսերի (մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց) 16 %-ը, իսկ սահմանամերձ համայնքներում կամ գերնորմատիվային ջրապահանջարկ ունեցող հողատարածքներում ներդրման դեպքում, կամ առնվազն 3 հա հողատարածքում ներդնող կոոպերատիվներին՝ 18 %-ը, եթե ներդրման աշխատանքներն իրականացվելու են առանց մասնագիտացված կազմակերպության:

Կապալառուի միջոցով աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն վարկային ներդրումն անկախ մշակաբույսից կազմում է 2.2 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 2.7 մլն դրամ՝ անձրևացման համակարգի համար, տրամադրվող վարկերի հանրագումարի մնացորդը մեկ Շահառուի համար չի կարող գերազանցել 150.0 մլն դրամը, առանց Կապալառուի աշխատանքների իրականացման դեպքում՝ 1.6 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 1.9 մլն դրամ՝ անձրևացման համակարգի համար, տրամադրվող վարկերի հանրագումարի մնացորդը մեկ Շահառուի համար չի կարող գերազանցել 110.0 մլն դրամը:

Կապալառուի միջոցով աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն ներդրումն (սխեմայի կազմում, կապիտալ ծախսեր, ներդրման աշխատանքներ) անկախ մշակաբույսից կազմում է 2.2 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 2.7 մլն դրամ՝ անձրևացման համակարգի համար, փոխհատուցվող գումարը մեկ Շահառուի համար չի կարող գերազանցել 10.0 մլն դրամը, կոոպերատիվների կողմից համակարգի ներդրման դեպքում՝ 27.0 մլն դրամը: Առանց Կապալառուի աշխատանքների իրականացման դեպքում 1 հա-ի համար կատարվող առավելագույն ներդրումն (կապիտալ ծախսեր՝ մոտեցնող խողովակ, գլխամասային հանգույց, բաշխիչ ցանց) անկախ մշակաբույսից կազմում է 1.6 մլն դրամ՝ կաթիլային ոռոգման համակարգի համար և 1.9 մլն դրամ՝ անձրևացման համակարգի համար, փոխհատուցվող գումարը մեկ Շահառուի համար չի կարող գերազանցել

8.0 մլն դրամը, կոոպերատիվների կողմից համակարգի ներդրման դեպքում՝ 20.0 մլն դրամը: